«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Մարտիրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Զովասարի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------**3**

Գլուխ 1.Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում ----------6

Գլուխ 2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը գրականության դասավանդման ընթացքում----------10

Եզրակացություն----------13

Օգտագործված գրականության ցանկ----------14

Ներածություն

Հայաստանի Հանրապետության պետական նոր կրթահամակարգով, որը հաստատվել է կառավարության կողմից, մեր երկրում գործում է միջնակարգ կրթության տասներկուամյա համակարգ: Ըստ հանրակրթության ուսումնական բնագավառների և միջնակարգ հանրակրթական դպրոցների աստիճանների՝ պետական կրթակարգը սահմանել է կրթական քաղաքականության հիմնական սկզբունքները՝ սովորողների ինքնուրույնություն, աշխատանքային համագործակցություն, ժամանակակից մեթոդների, կրթական համակարգում ձեռք բերված համաշխարհային փորձի կիրառում, տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների արդյունավետ գործունեություն և այլն:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով շեշտվում է նաև արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը աշակերտին:

Ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցությունների ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական,հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝չանտեսելով համամարդկային արժեքները:

Գլուխ 1. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեք» հասկացությունը: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Արժեք, կարևորություն, օգուտ, նշանակալի իր կամ երևույթ: Արտաքնապես արժեքը առարկայի կամ երևույթի առանձնահատկությունն է, սակայն նրա նշանակությունն ու օգտակարությունը սահմանված չէ բնության կողմից: Այն գնահատվում է ոչ միայն օբյեկտի ներքին կառուցվածքով, այլև հիմնվում է կոնկրետ գործողությունների ժամանակ նրան տրված սուբյեկտիվ գնահատականների վրա, որոնք մտնում են հասարակական ոլորտի մեջ, քանի որ մարդը հետաքրքրված է կամ ունի դրա կարիքը: Արժեհամակարգը կողմնորոշիչ դեր ունի մարդու առարկայական և սոցիալական իրականության մեջ, որը նրա պրակտիկ վերաբերմունքն է շրջապատող առարկաների ու երևույթների հանդեպ:

Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը և մեզ մոտ ձևավորվում է արժեհամակարգ:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ունի բավականին լայն ընդգրկում: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը,

ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով[1]:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները,

[1] https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf

վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների:

Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»[2]:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով[3]:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

[2] https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf
[3] Տես նույն տեղում

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Ավագ դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում արժեկողմնորոշիչ մեթոդիկայի մշակման ժամանակ օգտագործել են Բենջամին Բլումի ուսուցման տաքսոնոմիան:

«Տաքսոնոմիա» հասկացությունը կենսաբանության մեջ նշանակում է օբյեկտների այնպիսի դասակարգում և համակարգում, որոնք կառուցվում են այդ օբյեկտների միջև առկա էական կապերի վրա և նկարագրվում են հաջորդականության մեջ՝ պարզից գնալով դեպի բարդը և ներկայացնելով ուսուցման նպատակների, խնդիրների, իրականացման փուլերի և այդ ամբողջ գործընթացի կազմակերպման պատկերը: Բ. Բլումի տաքսոնոմիան բաժանվում է երեք խմբի՝ ճանաչողական, ներգործական, հոգեշարժողական: Ճանաչողական խմբի նպատակները՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, համադրում, գնահատում, մանրամասնում են ճանաչողության կամ մտածողության գործընթացը, սակայն, ըստ Բ. Բլումի, գոյություն ունեն նաև կրթության այլ նպատակներ, որոնց առնչվում է ներգործական (զգացմունքային–արժեքային) խումբը. դա վերաբերում է սովորողների կողմից առաջադրանքի կատարման հուզականությանը, աշխարհի նկատմամբ հուզական–արժեքային վերաբերմունքին՝ պարզ ընկալումից, հետաքրքրությունից մինչև արժեքային կողմնորոշումների և հարաբերությունների ձևավորումը: Ներգործական խմբի մակարդակներն են. Ընկալում: Աշակերտը տեղյակ է կամ մասնակից շրջապատող երևույթներին: Պատասխան: Աշակերտը փորձի արդյունքում նոր վերաբերմունք է դրսևորում և այդ կերպ պատասխանում այդ նոր փորձին:

Գնահատում: Աշակերտն արտահայտում է իր գնահատականը՝ այդ գաղափարն ընդգրկելով իր հետագա փորձի մեջ: Կազմակերպում: Աշակերտն իր արժեքային ընդհանուր համակարգի մեջ նոր արժեք է ներառում և կարողանում այն ճիշտ դասակարգել՝ ըստ առաջնահերթության: Արժեքի բնութագրում: Աշակերտը հետևողականորեն գործում է ըստ արժեքների և մեծապես վստահում փորձին [4]:

Վարժությունների և առաջադրանքների հիմնական նպատակը սովորողների հուզական–արժեքային վերաբերմունքի ձևավորումն է ու գործունեության յուրաքանչյուր մակարդակի համար պետք է ներառի առաջադրանքներ, հարցեր, վարժություններ՝ ըստ կարողությունների ու հմտությունների ձևավորման հաջորդականության: Նախընտրելի է տաքսոնոմիան կիրառել արժեքային տեսանկյուններ ունեցող որևէ հիմնախնդրի շրջանակում, որն ընդգծված շեշտադրումներ ունի և նպաստում է սովորողների մեջ արժեքային–գնահատողական կարողությունների ձևավորմանը, օրինակ՝ շրջակա միջավայրի էկոլոգիական խնդիրներին, մարդու իրավունքներին, մշակութային երկխոսությանը, միջմշակութային հաղորդակցմանը և այլն: Ընկալման մակարդակում վարժություններն ու առաջադրանքները հիմնականում ուղղված են լեզվաքերականական կարողությունների ձևավորմանը: Թեմայի ուսումնասիրումն սկսվում է բառապաշարի ներմուծումից, ապա բառապաշարի ակտիվացման և խոսքում ամրակայման համար մշակվում են համապատասխան վարժություններ: Այս մակարդակում ուղղորդող հարցադրումներով աշակերտին պետք է կողմնորոշել, թե ընթերցանության ընթացքում տեքստի բովանդակության մեջ ինչին պետք է հետևեն, հիմնական որ մտքերը պետք է առանձնացնեն՝ նյութը համարժեք, ըստ առաջադրված նպատակի ընկալելու համար: Տեքստի քննարկման և մեկնաբանման ընթացքում հարցերն ու առաջադրանքները կառուցվում են հետևյալ բառերով՝ բնութագրել, նկարագրել, առանձնացնել, համեմատել, հակադրել, մեկնաբանել, թարգմանել, դասակարգել, ամփոփել, պատմել, ցույց տալ, անվանել, նշել, սահմանել, համակարգել, դասդասել, ընդգծել, լսել, գրառել, համապատասխանեցնել և այլն: Երբ դասավանդողը հավաստիանում է, որ աշակերտներն ընկալել են նյութի բովանդակությունը, վերջիններս անցնում են երկրորդ՝ պատասխան փուլին,

[4] . Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: 20–րդ դարի մանկավարժական տեսություններ, Եր., Նոյյան տապան, 2005, էջ 268–269 էջ:

այսինքն՝ պետք է իրենց վերաբերմունքը դրսևորեն ընկալած տեղեկատվության նկատմամբ: Նպատակահարմար է այս փուլն իրականացնել համագործակցային փոքր խմբերով, որպեսզի աշակերտները կարողանան կարծիքներ փոխանակել, քննարկել, վիճել, բացահայտել հիմնախնդրի էությունը: Այն բանից հետո, երբ հիմնախնդրի էությունը որոշված է, պետք է բացահայտել, թե ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ ընդհանուր լուծումներ գտնելու և հիմնավորելու համար: Հարցերն ու առաջադրանքները ձևակերպվում են հետևյալ բառերով՝ կիրառել, ընտրել, կազմել, պլանավորել, շարունակել, կազմակերպել, վերականգնել, լրացնել, զարգացնել, որոնել, վերադասավորել, ավարտել և այլն: Գնահատման փուլը նվիրված է սովորողի գնահատողական վերաբերմունքի, դիրքորոշման ձևավորմանը, տեղեկատվության վերլուծությանը, փաստերի համադրմանը և տեսակետների փաստարկմանը: Առաջադրանքները ձևակերպվում են հետևյալ բառերով՝ ապացուցել, ընտրել, ստուգել, հիմնավորել, արժևորել, գնահատել, ներկայացնել, հաղորդել, բնութագրել, հորինել, վերլուծել, զանազանել, տարբերակել, բնորոշել, գտնել, համեմատել և այլն: Կազմակերպման փուլում վերլուծվում և իմաստավորվում են այն խնդիրները, որոնց նկատմամբ սովորողները հստակեցրել են իրենց վերաբերմունքը: Այս փուլում նրանք պետք է կարողանան փաստարկներով հիմնավորել իրենց մոտեցումը, սահմանել պատճառահետևանքային կապերը, համադրել տարբեր տեսակետներ, համաձայնել կամ չհամաձայնել, ճշտել խնդրի լուծման ուղիների հուսալիությունն ըստ հասարակության արժեքային նախընտրությունների, այդ արժեքների մեջ կողմնորոշվել և հավաստիանալ սեփական արժեքային ընտրության ճշմարտացիության մեջ: Առաջադրանքների առանցքային բառերն են՝ նախագծել, երևակայել, կապակցել, համադրել, համակցել, կազմել, կանխատեսել, առաջարկել, ներկայացնել, հիմնավորել, կառուցել, փոխակերպել և այլն: Արժեքի բնութագրման փուլն ամփոփիչ է. այս փուլում աշակերտները ներկայացնում են իրենց դիրքորոշումը և արտահայտում արժեքային դատողություններ: Քննարկվող հիմնախնդրի նկատմամբ ձևավորված հուզական–արժեքային վերաբերմունքը, արժեքային կողմնորոշումների ձևավորվածության մակարդակը պարզելու համար աշակերտներին հանձնարարվում է գրել էսսե, մշակել նախագիծ, պատրաստել ուսումնասիրության արդյունքն արտացոլող նյութեր, կազմակերպել շնորհանդես,

ներկայացում, ստեղծել թղթապանակ, ընդսմին նախընտրելի է օգտագործել համակարգչային տարբեր ծրագրերի հնարավորությունները[5]:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա ե՛ւ ցավ, ե՛ւ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

Գլուխ 2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը գրականության դասավանդման ընթացքում

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի

5 Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում

նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: : Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը:

Գրականության դասավանդման հիմնական նպատակներիվ մեկը սովորողներին զուտ գրական երկերին ծանոթանալու հետ միաժամանակ անձի հոգևոր ու մտավոր ձևավորման ու զարգացմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության ցուցադրմամբ նրանց մեջ սերմանել մարդասիրություն, ազգային ոգի, բարոյական բարձր հատկանիշներ:

Գրականությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Գրականության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագաքաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած

գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին: Հենց այս պատճառով է,կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Գրականությունը ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր է: Գեղարվեստական պատկերների բացահայտման միջոցով գրականությունը մեզ տալիս է բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի հասկացություններ: Ոչ մի պատճառաբանություն, ամենախոսուն, ոչ մի պատճառաբանություն, առավել համոզիչ, չի կարող այնպիսի ազդեցություն ունենալ մարդու մտքի վրա, որքան ճշմարտացիորեն գծված պատկերը: Եվ սա է գրականության ուժն ու նշանակությունը: Այն ընդլայնում է մարդու մտահորիզոնը, սովորեցնում նրան մտածված ընթերցում, հասկանալ այն պատկերացումները, որոնք հեղինակը արտահայտում է պատկերների միջոցով: Տեքստի վրա գրագետ աշխատանքը հարստացնում է մարդու բառապաշարը, զարգացնում գրական լեզվին և գեղարվեստական տարբեր տեխնիկային տիրապետելու ունակությունը:

Եզրակացություն

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային,այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ուուսուցումը: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Գրականության Ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002:

2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: 20–րդ դարի մանկավարժական տեսություններ, Եր., Նոյյան տապան, 2005:

3. https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf